Դրանց ներքևով անցնում են կետերով լցված կամարաձև զարդեր (աղ. IV, նկ. 7)։ Այս դաշույնի կողքին, անմիջապես կրծքավանդակի մոտ հայտնաբերվեց թերթ բրոնզից պատրաստված տափակ կրծքազարդ, որն ունենալով եղևնու տեսք, հավանաբար կապվում է կենաց ծառի գաղափարի հետ։ Զարդը ստորին մասում ունի կլորացող պոչուկ, իսկ գագաթի ճյուղավորված ծայրերը իրար են միանում (աղ. IV, նկ. 11)։ Նմանօրինակ կրծքագարդ է հայտնաբերված և Ղափանի Թեղուտ թաղամասից (աղ. IV, նկ. 12)։ Դամբարանի հարավ-արևելյան կողմում հայտնաբերվեց երկաթե խողովակաձև նիզակ (աղ. IV, նկ. 9)։ Վերջինիս մոտ սփռված էին գուրգով պատրաստված, շկոկված մակերեսով, կարմիր գույնի անփայլ, խոշոր անոթի բեկորներ։ Մասնակի վերականգնումից հետո պարզվեց, որ դրանք միջին չափի, իրանի կենտրոնական մասում մեկ կանթ ունեցող կարասի բեկորներ են։ Կարասի դուրս թեքված վիզը ավարտվում է փորագիր հատիկազարդեր ունեցող թեթևակի փռված շուրթով (աղ. IV, նկ. 2)։ Կարասի կողքին հայտնաբերվեց նույն գույնն ու պատրաստման եղանակն ունեցող մի խոշոր սկահակ։ Վերջինիս կոնաձև ոտքը սնամեջ է և բարձր վզի վրա է պահում սկահակի գնդաձև, դուրս թեքվող վզիկ ունեցող իրանը, որի կենտրոնական մասի հակադիր ծայրերին կպցված է երկու աղեղնաձև կանթ։ Վզի հիմնամասով անցնում է ալիքաձև փորագիր գիծ, որը երկու կողմից երիկված է փորագիր հատիկազարդերով։ Անոթն իրանի վերին մասում ունի խոշագլուխ նախշ, կենտրոնական մասը հարդարված է զույգ փորագիր զարդագծերից կազմված և նրանց միջև ընկած տարածությունը հատիկազարդերով լցված կամարաձև պատկերներով (աղ. IV, նկ. 1)։ Ամենայն հավանականությամբ սկահակը ունեցել է պաշտամունքային նշանակություն։ Թերևս այդ են վկայում նրա կենդանական ու բուսական զարդամոտիվները։

Թվագրման համար առաջին նշանակություն ունեն մետաղե իրերը. նիզակը, ապարանջաները ու վզի մանյակները իրենց նմանօրինակներն ունեն Խրտանոցում, Լենինականում, Մակարաշենում, Կուրթանում և մ. թ. ա. VII—VI դարերով թվագրվող այլ հուշարձաններում։ Այդ է վկայում և դաշույնի բրոնզե պատյանը, որի նմանակը, բրոնզե ապարանջանների, նկարագրված նիզակատեսակների, վզի բրոնզե մանյակների և մ. թ. ա. VII—VI դդ. պատկանող այլևայլ իրերի հետ հայտնաբերվել է Ակներում Թաքայշվիլու կողմից։ Տրված թվագրությունը հաստատվում է մյուս նյութերի համեմատական ուսումնասիրության միջոցով։ Դրանցից գավաթը իր նմանակն ունի Կարճաղբյուր գյուղի դամբարաններից մեկում (դաշտային № 28) պեղված իրերի կոմպլեքսում։ Վերջինս հայտնաբերված է վերը նկարագրված նիզակի, երկաթե դաշույնի, մանգաղաձև դանակների, սկյութական ակինակի ու նետասլաքների հետ, որոնք ուրարտական հուշարձաններում հաճախ են հանդիպում և կայուն կերպով թվագրվում են մ. թ. ա. VII—VI դարերով։ Ինչ վերաբերում է եղեևնաձև կրծքազարդին, ապա որքանով մեզ հայտնի է, այն առայժմ իր զուգահեռները չունի։ Տրված թվագրության օգտին են խոսում և 1970 թ. Բաղաբուրջից հայտնաբերված վաղ հայկական ժամանակաշրջանին պատկանող նյութերը։ Ներկայացված լինելով տարատեսակ խեցանոթներով, դրանք պատրաստման եղանակով փաստորեն կրկնում են վերը նկարագրված խեցեղեն։ Այս զուգահեռները ցույց են տալիս, որ շիկահողյան կոմպլեքսը տեղադրվում է մ. թ. ա. VII—VI դդ. շրջանակներում։

Օ. ԽՆԿԻԿՅԱՆ

ԱՊԱՐԱՆԻ ԵՎ ԱՐԱԳԱԾԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայկական տարազի ատլաս կազմելու պահանջներից ելնելով, անհրաժեշտ է տալ յուրաքանչյուր պատմա-ազգագրական շրջանի տարազի մանրակրկիտ ուսումնասիրությունը, համալիրի բաղկացուցիչ մասերի, նյութի, գույնի, ձևվածքի, ծագման, հարատևման, վերացման դրանց տարբերակների վերաբերյալ մանրամասն տվյալները։ Այդ իսկ տեսակետից կարևոր է գոյատևող, տարածված կամ եկակի գործածված զգեստների ուսումնասիրությունը։

Ապարանի շրջանը հայերով վերաբնակեցվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո՝ 1829—1830 թթ. Արևմտյան Հայաստանից տեղափոխված բնակիչներով։ Շրջանում բնակություն են հաստատել հիմնականում Ալաշկերտից, Տուրուբերանից, մասամբ էլ Վասպուրականից գաղթողները։ Այսպես, Արագած, Ափնա, Մուլքի, Հարթավան, Արայի գյուղերում հաստատվել են Ալաշկերտից, իսկ Ջքնաղ, Մելիք, Մաղկահովիտ, Բուժական, Հայփամբ, Քա-

սաղ գյուղերում՝ Տուրուբերանից գաղթածները։ Վասպուրականցիներն առանձին ընտանիքներով ցրվել են տարբեր գյուղեր։ Ալաշկերտցիների մի մասն էլ հաստատվել է Սևանի ավազանում՝ Կամոյի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի շրջաններում։

Բնակչության այս տեղաշարժերը էական նշանակություն ունեցան վերոհիշյալ դավառների ժողովրդական տարազի տարածման, փոխազդեցության, նոր համալիրների կազմավորման ու դրանց հարատևման գործում։

1830-ական թթ. Ապարանի շրջանում գոյություն ուներ կանանց և տղամարդկանց տարազի երկուական համալիր։ Կանանց տարազի համալիրներից մեկը տուրուբերանցիներինն (մուշտարոնցիներ) էր, որ բաղկացած էր սպիտակեղենից, վերնաշապկից, վերնազգեստից, թևնոցից, կրծկալից, զոգնոցից, գոտուց, գլխի հարդարանքից, ազանելիքից։

Այս համալիրի վերնազգեստ-անթարին, որ կարվում էր գծավոր կտորից՝ մանուսայից և մետաքսե կտորից, ձևվածքով նման էր Վասպուրականում, Աղձնիքում, Փոքր Հայքում և Արևմտյան Հայաստանի այլ նահանգներում գործածվող կանանց վերնազգեստ-անթարուն։ Առջևամասը երկու փեղկանի էր, եզրերը՝ կողաձեղքերով, որ հասնում էին քղանցքից մինչև գոտկատեղ, առջևն ու քղանցքը կտրվում էին ալիքաձև։ Թևերն ուղիղ էին, իսկ թևքարերանը՝ ձևավոր և փոքր ձեղքով։ Եզրերին որպես զարդագիծ կարվում էր կարմիր մետաքսաթելից հյուսված տրեզ։ Զմռանը միմյանց վրա հագնում էին մի քանի վերնազգեստ-անթարի, ինչպես վերնազգեստ-զպունը՝ Վասպուրականում, վերնազգեստ-իրերփշկանին՝ Սյունիք-Արցախում։ Ամենօրյա և տոնական նույնանուն վերնազգեստի ձևվածքում տարբերություն չկար, տարբեր էին միայն նյութը և զարդարման եղանակը։

Վերնազգեստի կրծքի բացվածքը ծածկվում էր կրծկալով, որը կարվում էր բրդե կամ մետաքսե կտորներից։ Դրա վերևամասը նեղ էր, վզի շրջանաձև փորվածքով կամ առանց փորվածքի, կապիչներով ամրանում էր վզին։ Կրծկալ-սրտանոցը ասեղնագործվում էր բրդե կամ մետաքսե թելերով (տախտ. II, նկ. 1 ա, բ)։ Երբեմն կրծկալի վրա էր ամրացվում վերնազգեստի զարդ-շամշիկը, որի գործածությունը տարածված էր Տուրուբերանի Հարբ գավառում, իսկ Ապարանում բնակություն են հաստատել հիմնականում Հարբից գաղթողները։

Կանանց տարազի համալիրին գեղեցիկ տեսք էր տալիս քառանկյունաձև, կապույտ զույնի, խոշոր հյուսվածքով բրդե կտորից կարված կոշտոր՝ մեզարը[1], որի ամբողջ մակերեսն ասեղնագործվում էր բրդե գունավոր թելերով (տախտ. II, նկ. 2 ա, բ)։ Զոգնոցի ծայրին ամրացվում էր նեղ գոտի՝ մեզրթել, որը գոտկատեղը մի բանի անգամ փաթաթելուց հետո հանգուցվում էր։

Կրծկալ-սրտանոցի, զոգնոց-մեզարի, ինչպես նաև գլխաշոր-չոմբարի (տախտ. II, նկ. 3) ասեղնագործ զարդամոտիվները երկրաչափական նախշերն էին, հատկապես բազմանկյունաձև, եռանկյունաձև, խաչաձև, օձաձև զարդանախշերը, թռչունների ոճավորված պատկերները։ Դրանք ընդհանրություն ունեին Վասպուրականի, Աղձնիքի նույնատեսակ զգեստների զարդամոտիվների հետ։

Տուրուբերանցիների համալիրի սպիտակեղենը կարվում էր հայտնի «Բաղեշի կտավից»։ Սպիտակ շապկի վրա և վերնազգեստ-անթարու տակ հագնվող շապիկը (կարմիր-շապիկ) բրդանցքի կողքերին ուներ մեկական ճեղք, ինչպես Աղձնիքի նույնատեսակ շապիկը (ֆըրտախով շապիկ)։ Տուրուբերանից բերված թե՛ կարված զգեստները, թե՛ կտորեղենը դեռ երկար ժամանակ գործածական էին Ապարանում։ Դրանք սպառվելուց հետո սկսեցին օգտագործել տեղում արտադրված կտորեղենը։

Աղջիկների և կանանց գլխի հարդարանքում մեծ տարբերություն կար։ Աղջիկները, որպես ամենօրյա հարդարանք, 10—12 հյուսերի վրա գլխաշոր էին կապում։ Գլխի տոնական հարդարանքը գլխարկն էր, արծաթե նախշազարդ թասակով հանդերձ։ Կանայք դնում էին կարմիր զույնի բամբակե կտորով պատված, ստվարաթղթե կամ փայտե բարձրադիր շրջանակ, որի՛ բրդերը անվանում էին քոֆի։ Կապում էին ոսկե կամ արծաթե դրամների շարանով ճակտնոց։ Միջին տարիքի կանանց գլխի հարդարանքում վերոհիշյալ շրջանակը փոխարինվում էր հատուկ բարձիկով։

Ազանելիքը բաղկացած էր բրդե գունավոր թելերից հյուսված, երկրաչափական նախշերով զարդարված զուլպայից և ոտնաման-«կոնտուրայից»։

Գործածական զարդերն էին՝ ոսկե կամ արծաթե մատանին, ականջօղը, ապարանջանը,

---

[1] Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրական ֆոնդում պահվում են Ապարանի շրջանից ձեռք բերված №№ 670, 671, 674, 682 և Հայոց աղբաղրական ընկերությունից ստացված №№ 680, 683 զոգնոցները, 1103, 1107, 1116, 1117, 1119, 1120 կրծկալ-սրտանոցները, որոնք կարված և ասեղնագործված են Տուրուբերանի Հարբ գավառում։



Տախտակ I

կրծքազարդ-համայիլը, այսպես կոչված «գյարդանլըղը»։ Համայիրի կրծքազարդերը և գլխի հարդարանքը լավ է արտահայտվել Ապարանի շրջանի գյուղերում պատրաստվող կավե կանացիակերպ աղամանների նախշազարդերում։

Տուրուբերանցիների տարազի համայիրը Ապարանում գոյատևեց մինչև XIX դարի կեսը։ Հետագայում, մինչև XIX դարի վերջերը, համայիրի առանձին տարրեր շարունակեցին պահպանվել տարեց կանանց հագուստում։

Ալաշկերտցիների համայիրը, որը այդ նույն շրջանում տարածվեց նույնպես 1830-ական թթ., բաղկացած էր սպիտակեղենից, լրացուցիչ ներքնազգեստից, վերնազգեստից, գոգնոցից, գլխի հարդարանքից, ագանելիքից։

Այս համայիրում գործածական էր շապկի ձևվածքի երեք տարբերակ (շապիկը կարվում էր սպիտակ կամ կարմիր գույնի կտավից, չթից)։ Առաջին տարբերակը ձևվում էր հետևյալ կերպ. կտորի երկու երկարություն (անհրաժեշտ չափի) երկայնակի ծալվում էր, կենտրոնում կտրվում վզի բացվածքը և մեկ տապակի վրա ճեղքվում կրծքի բացվածքը։ Կողքերում, լայնացման նպատակով առջևից և ետևից ավելացվում էր մեկական շեղ կտոր՝ շաք (տախտ. I, նկ. 1 ա, բ)։ Ետնամասը և կրծքամասը, մինչև գոտկատեղ, կարվում էր երկտակ, ըստ որում երկրորդը վերադիր էր, հարմարեցվում էր շապկի ձևվածքին և եզրերը վրայակարվում։ Թևքերը հիմքում ուղիղ էին, թևքաբերանում շարով հավաքվում էին բերանակալի մեջ։ Շապկի երկարությունը հասնում էր մինչև սրունքները։ Կրծքի բացվածքի եզրերը և նեղ օձիքը զարդարվում էին վրայակարով, «ձուկ», «կուտնոր» զարդանախշերով (տախտ. I, նկ. 14, 15)։ Այս ձևվածքով շապիկը տարածված էր Վարդենիս, Արադած, Մելիք գյուղերում։

Շապկի երկրորդ տարբերակում կողքերի շեղ կտորները չէին հասնում անութներին, այլ սրածայր վերջանում էին դրանցից քիչ ներքև, դրան միացվում էր անութակտոր-զուգակը, որը բառանկյունաձև փոքր հավելված էր, ծալվում էր շեղ և տեղադրվում թևքի ու շապկի կենտրոնական կտորի միջև։ Այս տարբերակը բղանցքի երկու կողքերին ուներ փոքր ճեղք (տախտ. I, նկ. 2 ա, բ), մնացած մասերի ձևվածքը և զարդարման եղանակը նման էր առաջին տարբերակին։ Տարածված էր Վարդենիս, Ջքնաղ, Նիգավան գյուղերում։

Երրորդ տարբերակում կողքի շեղ կտորները նեղ մասով միացվում էին թևքին, այդ երկուսի միջև ավելացվում էր անութակտոր-զուգակը (տախտ. I, նկ. 3 ա, բ)։ Այս տարբերակը տարածված էր Սարալանջ, Ծաղկահովիտ, Մուլքի, Մռավյան գյուղերում մինչև 1940-ական թթ.։

Շապկի կտորներից էր կարվում վարտիքը։ Կտրվում էր կտորի երկու երկարություն, ծալվում երկտակ, կարվում փողքերը, դրանց միջև տեղադրվում սեպաձև մեծ «ձագը»։ Փողքաբերանից մինչև ծնկատակը կարվում էր վերադիր կարմիր գույնի բամբակե կտոր որպես զարդաձև։ 1920-ական թթ. փողքերը վերոհիշյալ եղանակով զարդարելը վերացավ, իսկ զգեստը ձևվածքով պահպանվեց մինչև 1940-ական թթ.։

Լրացուցիչ ներքնազգեստը՝ ըրխալըղը (արխալաղ) կարվում էր սև, կապույտ գույնի բամբակե կտորից (սատինից), ուներ խավիներ՝ բրդե, մետաքսե կտորից, գոտկատեղը կարով էր։ Այն ներքնամասը, որ բաղկացած էր հինգ տապակից, շարով հավաքվում էր վերնամասի տակ։ Առջևը շար չէր արվում։ Վերնամասը առջևում վերևից մինչև գոտկատեղի կարը ճեղքվի էր, այդ ճեղքը փոքր հատվածով շարունակվում էր նաև ներքնամասում։ Թևքերը երկար էին, հիմքում թեք կտրվածքով։ Թևքաբերանը աստիճանարար նեղանում էր, փոքրինչ ծալվում դեպի ներս և կարվում քաղելով։ Թևքատեղը փորվածքով էր. կողքերը վերնամասում առանց կարի (տախտ. I, նկ. 4 ա, բ)։

Լրացուցիչ ներքնազգեստի երկրորդ տեսակը, որ կոչվում էր «ծուռ յախա» (տախտ. I, նկ. 5 ա), նույնպես ուներ կրծքի բացվածք, բայց այն հասնում էր մինչև գոտկատեղ։ Առջևից, ձախ կողմին մոտիկ, ներքնամասի վրա փոքր ճեղք կար, այսինքն՝ զգեստի ներքնամասի ճեղքը ծուռ էր, այլ ոչ ուղղագիծ կրծքի բացվածքի շարունակությունը։ Ուներ երկար թևքեր։ Աստառապատվում էր սպիտակ կտավով։ Թե՛ առաջին, թե՛ երկրորդ տեսակի լրացուցիչ ներքնազգեստի վզի բացվածքի եզրերին նույն կտորից կարվում էր նեղ երիզ։ Երկու տեսակի լրացուցիչ ներքնազգեստի կրծքի բացվածքի եզրերին կարվում էր չապրաստ կամ կոճակ։ Երկու տեսակն էլ աստառի հետ միասին կարվում էին շուլալելով («թակլեյով»)՝ երկայնակի գծով։ Զգեստի թիկունքն ու կրծքամասը առանձին էին շուլալակարվում. թևքերն՝ առանձին։ XX դարի սկզբից շուլալակարը փոխարինվեց մեքենակարով[2]։

Կանանց տարազի ալաշկերտցիների համայիրի վերնազգեստը, ի տարբերություն հայկական մյուս տարազախմբերի (Սյունիք—Արցախի, Գողթնի, Վասպուրականի, Աղձնիքի, Տու-

2 XIX դարի վերջին, 1880-ական թթ., կարի մեքենան մուտք գործեց հայկական գավառները և լայն տարածում ստացավ XX դարի սկզբին։ Ապարանի շրջանում ևս թակլակարշուլալակարը փոխարինվեց մեքենակարով։

բուրեանի, Փոքր Հայքի, Բարձր Հայքի, Արարատյան հովտի), բաղկացած էր երկու մասից՝ կարճ վերնազգեստից՝ կուրտիկից[3] և «դովրից» (юбка)։ Դրանք սովորաբար կարվում էին բամբակե կտորից՝ սատինից (լաստիկ, արալաստիկ)։ Կուրտիկն ուներ կրկնակի վերտամաս՝ արքալաթ (кокетка), որի տակ շարով հավաքվում էր ներքնամասը և կոճկվում 2—5 կոճակով։ Թևքատեղերը փորվածքով էին, ուսը՝ թևք կտրվածքով, վզի շրջանաձև բացվածքով, աստառած (տախտ. I, նկ. 8 ա, բ)։

Գործածական էր վերնազգեստ-կուրտիկի երկրորդ տարբերակը, որն առանց շարի էր և առջևից ու ետևից ուներ նեղ, երկայնակի մեքենակար դարսեր (մանիշկաներ)։ Աստառապատվում էր ինչպես առաջին տարբերակը։

Վերնազգեստի երկրորդ մասը՝ դովրը սովորաբար կարվում էր կտորի 4—5 տապակից։ Դրանք միացվում էին միմյանց ներսի կարով և շարով կամ էլ ծալերով-կթելով հավաքվում նույն կտորից կարված նեղ գոտու մեջ (տախտ. I, նկ. 9 ա, գ)։ Վերջինիս ծայրերը երկար կապիչներով՝ ճտնակներով էին, որոնք տանում էին ետ, իրար խաչաձևելուց հետո ձախ կողքին, ձեղքի վրա մեկ հանգույցով՝ օղչիկով կապում։ Դովրի վերոհիշյալ ձևվածքը Ապարանում տարածված էր մինչև 1940-ական թթ.։ Այժմ այն կարելի է հանդիպել միայն տարեց կանանց մոտ։

Կանանց տարազի ալաշկերտյան համալիրի կարևոր բաղկացուցիչ մասերից էր բամբակե սև գույնի կտորից կարված քառանկյունաձև գոգնոցը՝ մեղարը, որը շարով հավաքվում էր նույն կտորից կարված նեղ գոտու մեջ։ Գոգնոցի աջ կողմում կարվում էր վերադիր բառանկյունաձև գրպան։ Գոգնոց կապում էին նաև աղջիկները, սկսած յոթ տարեկան հասակից։ Ամենօրյա՝ տնամիջի և տոնական՝ պահունի գոգնոցի ձևվածքը նույնն էր (տախտ. I, նկ. 10 ա, բ)։

Տոնական (պահունի) զգեստներն էին՝ կարճ վերնազգեստ-կուրտիկը, դրա հետ միասին գործածվող դովրը և գոգնոց-մեղարը։ Այս համալիրում բացակայում էին զգեստի զարդարման այն եղանակները, որոնք գործածվում էին Հայաստանի տարբեր գավառներում։ Զգեստը կարելու համար գործածական էին գերազանցապես բամբակե, մասամբ էլ բրդե միագույն կործվածքները։

XIX դարի վերջին—XX դարի սկզբին ընդհանրություն կար Ապարանի և Սևանի ավազանի, հատկապես Մարտունու, Վարդենիսի, Կամոյի շրջանների կանացի տարազի նյութի և ձևվածքի միջև։ Այդ ընդհանրությունը արտահայտվում էր լրացուցիչ ներքնազգեստի, վերնազգեստի, գոգնոցի միջոցով։ Այս զգեստատեսակները ալաշկերտյան համալիրի բաղկացուցիչ մասերից էին և տարածվել էին վերոհիշյալ վայրերում ալաշկերտցիների բնակություն հաստատելու հետևանքով։

Կանացի տարազի ալաշկերտյան համալիրի գլխի հարդարանքը համեմատաբար բարդ էր։ Մազերի սանրվածքը գրեթե ընդհանուր էր հայկական մյուս գավառների աղջիկների և կանանց սանրվածքի հետ։ Այս համալիրում ևս ընդունված էր շատ հյուսներ անելը (10—12 հյուս)։ Աղջիկները կապում էին մեկ գլխաշոր, որը բառանկյունաձև էր, ծալվում էր եռանկյան ձևի, ծայրերը հյուսների տակ խաչաձևելուց հետո կապում էին ճակատին։ Կանանց գլխի հարդարանքին բնորոշ էր մազերի մեկական փունջ ոլորելն ու ցուցադրելը գիլֆ անելը։ Կարևոր նշանակություն ուներ գագաթին շրջանի ձև տվող, կտորից կարվող շրջանակը, որը դնում էին ամուսնությունից հետո ամբողջ կյանքում, բացառությամբ սգի մեջ լինելու օրերից։ Ճակտոնոցը բաղկացած էր ոսկե կամ արծաթե դրամների շարանից, կենտրոնում մեկ մեծ դրամով՝ մայմուդյա միջանոցով, որը նշանդրեքի օրը աղջիկը ստանում էր փեսացուից իբրև նշան։ Գլխի հարդարանքի բաղկացուցիչ մասերից էին բերանակալը (բթկալը), գլխաշոր-չոմբալը, երկրորդ գլխաշոր-շալկովը, շղթաներով բորոցն ու կեռիկը, երեսի քողը՝ թոգլին։ Քողը գործածում էին միայն նորահարսները՝ շիրականության շրջանում, մինչև երեք տարի, ոմանք էլ մինչև առաջին երեխան ունենալը։ Գլխի հարդարանքը հավաքելը դժվար լինելու պատճառով ինչպես Սյունիք-Արցախում, Գողթնում, այստեղ նույնպես կանայք գերադասում էին այն օրերով (գիշերցերեկ), անգամ ամբողջ մեկ շաբաթ թողնել գլխին։ Գլխի հարդարանքի այս ձևը հարատևեց մինչև 1940-ական թթ.։ Դրան զուգահեռ, XX դարի սկզբից շրջանի հատկապես Նիգավան, Վարդարլուր, Ծաղկահովիտ գյուղերը մուտք գործեցին Բարձր Հայքի կանանց տարազախմբի գլխի հարդարանքի առանձին տարրեր, այն է՝ մետաքսե գունավոր թելերով ասեղնագործված, ծաղկանախշերով ժանյակով զարդարված, թավշե կտորով պատված շրջանակը՝ վարդը, որը Շիրակում անվանվում էր թանթանա, և գրամների երկշարան ճակտոնոցը՝ շերիտը։ Գործածական էր միայն նորահարսի և միջահասակ կնոջ գլխի հարդարանքում։

3 Կուրտիկ բառը պարսկերեն է, kurta կամ kurtak բառից, որ նշանակում է կարճ զգեստ (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913)։

Գլխի հարդարանքի առանձին տարբեր փոխառված էին Շիրակից, բայց դրանց գործածությունը շրջանում չարունակվեց։ Ապարանի շրջանի կանանց տարազի ալաշկերտյան համալիրի գլխի հարդարանքը տարածվեց նաև այն գյուղերում, ուր բնակություն էին հաստատել տուրուբերանցիները։ Այսօր էլ շրջանի Լուսագյուղ, Մելիք և հատկապես Մոավյան գյուղերում տարեց կանանց մոտ պահպանվում է տարազի ալաշկերտյան համալիրի գլխի հարդարանքը, սանրվածքով հանդերձ։

Այսպիսով, տեղական ավանդական ձևը հարատևեց Ապարանում, իսկ Իարաբ Հայքի տարաղամբի տարածման վայրերից մեկի՝ Շիրակի կանանց գլխի հարդարանքի առանձին տարրեր, որ մուտք էին գործել Ապարան, հետագայում աստիճանաբար վերացան, իրենց տեղը զիջելով շրջանին բնորոշ ավանդական ձևին։

Կանանց տարազի ալաշկերտյան համալիրում ագանելիքը նախշազարդ բրդե գուլպան էր և ոտնամանը։ Գուլպայագործության մեջ այստեղ ընդունված էին հյուսածո նախշերը «բոչկի նախշ», «շամխիարի» և այլն։ Իսկ ոտնամանը տրեխն էր (չարուխ), XIX դարի սկզբից՝ նաև սև գույնի ոտնամանը, որ անվանում էին «ադելխանի կոշիկ», այսինքն՝ Թիֆլիսում գործող Ադելխանովի կոշիկի գործարանի արտադրած կոշիկը։ Գործածական էր նաև ոտնաման-յամանին, որը ձեռք էին բերում Ալեքսանդրապոլից և Աշտարակից։ Նորահարսի ոտնամանը կանաչ, կարմիր կամ սև գույնի, ոչ խոր ճթիկ սոլն էր, որն ուներ մետաղե «նալչ» և մոտ երեք սմ կրունկ։

Երեխաներին հագցնում էին բամբակե կտորներից կարված չապիկ, առանց կողքի լայնացնող հատվածի՝ «չարի»։ Հագցնում էին վերնաշապիկ, ելակ, գուլպա, տրեխ։

Աղջիկները որոշ գյուղերում գնում էին գրլխարկ՝ արախչի, որը կարվում էր բդրուջ կարով։ Այն սպիտակ բամբակե կտորից էր, շրջանաձև գագաթով (տախտ. II, նկ. 4), կողերը շարով միացված գագաթի շրջանաձև կտորին և ամրոցովին շուլալված իրար հատող թեր գծերով։ Գծերի հատումից առաջանում էին փոքր ռոմբաձև բզբուջներ, որի պատճառով էլ կոչվում էր «բդրուջ կար»։ Աղջիկների այս գլխարկը գործածության մեջ էր մինչև 1940-ական թթ.։

Տղամարդկանց տարազի լայն ընդգրկում ունեցող համալիրը տուրուբերանցիներինն էր, որ գաղթից հետո նոր բնակության վայրում գործածական էր մինչև XIX դարի կեսը։ Երկրորդ համալիրը այսպես կոչված «Կովկասյան» ձևն էր։

Տղամարդկանց տուրուբերանյան տարազի բաղկացուցիչ մասերից էր սպիտակեղենը, ըստ որում չապիկը թևերի երկար թեզանիքներով՝ չալահիկներով էր, որոնք ասեղնագործվում էին և զարդարվում ուլունքներով։ Անդրավարտիքը շալվարը կարվում էր բրդե հասարակ կտորներից, իսկ տոնականը գծանախշ բրդե կտորից։ Կարատեղերը և փողաբերանը ասեղնապատվում էին կանաչ գույնի բրդե թելով՝ կորսգիծ ուղիղ գծանախշերով։ Համալիրին հատուկ էր բամբակե կամ բրդե կտորներից կարված յայն գոտին, թաղիքե գլխարկը՝ քոլոզը, փաթաթանով՝ փուշիով։

Ագանելիքը նախշազարդ բրդե գուլպան էր ու սոնապանը (տախտ. II, նկ. 5), որոնք եզրի թելով կապվում էին ծնկի տակ, և ոտնամանը՝ «կոնտուրան», որ ձեռք էին բերում Ալեքսանդրապոլից։ Գուլպայի, սոնապանի, ինչպես նաև թեզանիքների գարդամոտիվը երկրաչափական նախշերն էին։

Տղամարդկանց տարազի մյուս համալիրը բաղկացած էր սպիտակեղենից, վերնազգեստից, գոտուց, անդրավարտիքից, տար վերնազգեստից, գլխի հարդարանքից, ագանելիքից։

Սպիտակեղենը կարվում էր կտավից, լայն թևերով, անութակտորով՝ գուղակով, թևքաբերանը՝ բերանակալով։ Կոնկվում էր մեկ կոճակով։ Վզի շրջանաձև բացվածքը, կրծքի ճեղքը և թևի բերանակալը ասեղնագործվում էին ուլալակարով, երկրաչափական նախշերով։

Վերնազգեստ-արխալուղը տարածված էր երկու տարբերակով։ Առաջին տարբերակի աջ ու ձախ փեղկերի եզրերին, վզի բացվածքից մինչև գոտկատեղ, կարվում էր չապրաստ։ Ներքեվամասը բաղկացած էր 4—6 շեղ կտորներից՝ «սրերից», որոնք միացվում էին միմյանց և կարվում վերնամասի հետ։ Թևքերը մինչև թևքարերան թույլ նեղացվում էին, եզրը և բղանցքը նեղ շերտով ծալվում էին դեպի ներս և կարվում բաղելով կամ մերենայով։ Ուներ հանվող օձիք (տախտ. I, նկ. 6 ա, բ)։

Վերնազգեստ-արխալուղի երկրորդ տարբերակը, որ կոչվում էր «դոշով արխալուղ», կոճակներով էր և ուներ նաև երկրորդ կոճակաշարը (տախտ. I, նկ. 7 ա, բ)։ Այն կարվում էր վայլուն կիսամետաքսե սև գույնի կտորից, կամ էլ գործարանային «վեսկի մատերա» կոչված կտորից։ Այս տարբերակը գործածում էր հարուստ խավը։ Երկու դեպքում էլ զգեստը աստառապատվում էր սև կտավով։

Անդրավարտիքը, որ կարվում էր կապույտ գույնի մալաց, լաստիկ կամ սև գույնի բրդե հորսգործ կտորներից, խոնջանադարձով էր։ Հետևապես նաև խոնջանակապով, շեղանկյունաձև ձագով։



Таблица II

Վերնագգեստ-արխալուղի երկու տարբերակի վրայից էլ կապվում էր կաշվե գոտին, իսկ XIX դարի վերջին և հատկապես XX դարի սկզբին ավելի հարգի էր Ալեքսանդրապոլի վարպետների պատրաստած արծաթյա գոտին։

Տար վերնագգեստը՝ չուխան, կարվում էր գյուղերում արտադրվող բրդե խոշորահյուսվածք տնայնագործական կտորից, որը գործվում էր հատուկ չափով։ Մեկ չուխա կարելու համար անհրաժեշտ էր 10—14 արշին կտոր, որի լայնությունը 25 սմ էր, մեկ հենր գցելով գործվում էր մեկ կամ երկու չուխայացու։

Շրջանում տարածված էր չուխայի երեք տարբերակ, առաջինը կոչվում էր «դարսերով չուխա», որովհետև ետնամասում՝ գոտկատեղում կիպ վերնամասի տակ, դարսերով էր հավաքվում (տախտ. I, նկ. 11 ա, բ)։ Քղանցքը կողքերում մեկական ճեղքով էր, թևքերը հիմքում և թևքարերանում լայն էին, փոքր ճեղքով, վերնամասը և թևերը աստառապատվում էին բամբակե կապույտ կամ սև գույնի կտորով։ Վզի բացվածքի, աջ ու ձախ փեղկերի, թևքարերանի, դրա ճեղքի, բղանցքի և կողքի մեկական ճեղքերի եզրերին կարվում էր մետաքսե սև հաստ ոլորած թել, որը զարդաձև լինելուց բացի, ծառայում էր եզրերը ձիգ, ամուր պահելուն։

Տար վերնագգեստ-չուխայի երկրորդ տարբերակը գոտկատեղում շարով էր՝ օյմով։ Սա նույնպես կարվում էր տեղական տնայնագործական բրդե կտորից, թևերը հիմքում և թևքարերանում լայն էին, ինչպես առաջին տարբերակինը, բայց առանց թևքարերանի ճեղքի։ Աջ ու ձախ փեղկերի եզրերին, գոտկատեղում կարվում էր շապրաստ։ Վերնամասը և թևքերանը աստառապատվում էին բամբակե սև կամ մոխրագույն սատինով կամ կտավով (տախտ. I, նկ. 12 ա, բ)։

Երրորդ տարբերակը գոտկատեղում առանց շարի և առանց դարսերի էր։ Հինգ շեղ կտորներից բաղկացած ներքնամասը ետևում ներսի կարով հավաքվում էր վերնամասի տակ։ Շեղ կտորների միացման կարերը գոտկատեղում կոր էին, դուրս ցցված, թևերը հիմքում ձևվում էին փոքր-ինչ թեք, թևքարերանը՝ ճեղքով։ Վերնամասը մինչ գոտկատեղ և թևերը աստառապատվում էին բամբակե կտորով, ինչպես առաջին և երկրորդ տարբերակները (տախտ. I, նկ. 13 ա, բ)։

Չուխայի երեք տարբերակները գործածական էին բոլոր գյուղերում, այն հագնում էին ամուսնացած տղամարդիկ։ Երիտասարդները մինչև ամուսնանալը տար վերնագգեստ չէին հագնում։ Պսակվելու ժամանակ չուխա չունեցողը վերցնում էր ունեցողից, հարսանիքի օրը հագնում, հետո վերադարձնում տիրոջը։ Աշղալիսի սովորություն կար նաև ուրիշ գավառներում։ Երևանում չուխա էին պահում եկեղեցում, իսկ ամուսնության հանդիսությունը սկսվում էր եկեղեցուց, չուխա չունեցողը օգտագործում էր եկեղեցում պահվող չուխան, հարսանիքի ավարտից հետո վերադարձնում։

Հարսանեկան տար վերնագգեստը «չարքաղի» կոչվածն էր, այսինքն՝ չերքեզական ձևով կարված չուխան։ Գյուղերում կային վարպետ-դերձակներ, որոնք կարում էին չուխայի տարբերակները։ Չերքեզական ձևով կարված չուխան գնում էին նաև Թիֆլիսից։

Տղամարդկանց գլխարկը կարվում էր գառան մորթուց։ Երիտասարդները գնում էին թաղիից կարված գլխարկ՝ բյուլա կամ էլ ասեղնագործ գլխարկ-արախչի (տախտ. II, նկ. 6)։ Երևանների գլխարկը գունավոր թելերով, տարբեր զարդանախշերով (տախտ. I, նկ. 15, 16, 20, 21, 22) հելունագործ արախչին էր։ Նորափեսայի գլխարկը կարվում էր գառան մորթուց, դա «բուխարա» գլխարկն էր, որը պատվիրում էին Ալեքսանդրապոլում։ Շրջանում կարվում և գործածվում էր մորթե գլխարկի երեք տեսակ՝ «դարարդի», «պոլոգ», «գելջալիկ»։ Դաբարդին գանաձև էր, գագաթը շրջանաձև կտրած, սա գործածում էր Հարուստ խավը, երկրորդ տեսակը՝ պոլոգը, սրագագաթ էր, գնում էին տարեց տղամարդիկ, «գելջալիկը» բաղկացած էր չորս կտորից, որոնք մինչև գագաթ աստիճանաբար նեղանում էին, գնում էին միջահասակները։

Տղամարդկանց տաբատի այս համալիրում զուլպան նույնպես հյուսվում էր բրդե գունավոր թելերից, «գյոլ», «վարդ», «բոչկնի նախշ», «շամխիտրի», «լարի աչք» կոչվող զարդանախշերով (տախտ. I, նկ. 22, 24, 18, 19, 23)։ Ոտնամանը տրեխն էր, որ կարվում էր մոխրաջրի և թթված թանի միջոցով մշակված եզան, կովի, գոմեշի կաշուց։ Տրեխի տեսակներն էին՝ «աջրնակ» և «դրանակ»։ Աջրնակը, որ կարվում էր շուլալելով, շուտ վերացավ, իսկ դրանակը, որ առանց շուլալելու էր, գործածության մեջ էր մինչև 1950-ական թթ.։ XIX դարի սկզբին տրեխին զուգահեռ տարածվեց նաև յամանին, որն, ինչպես կանանցը, ձևոր էին բերում Ալեքսանդրապոլից կամ Երևանից։ Գործածության մեջ էր նաև ճտրավոր կոշիկը։

Ապարանի շրջանի կանանց և տղամարդկանց տարազի երկուական համալիրները աստիճանաբար փոխարինվեցին նորաձև զգեստով։ Ինչպես նշեցինք, 1940-ական թթ. հետո հին

կրողները եզակի էին, իսկ այսօր կարելի է հանդիպել միայն կանանց տարազի առանձին բաղկացուցիչ մասերը կրողների։

Ապարանի շրջանի ժողովրդական տարազն իր բնորոշ կողմերով համապատասխանում էր բնակչության զբաղմունքին, սոցիալ-տնտեսական վիճակին, աշխարհագրական-կլիմայական պայմաններին և նյութական մշակույթի մյուս բնագավառների հետ միասին կարևոր աղբյուր է տվյալ շրջանի պատմության հարցերի լուսաբանման համար։

Ե. ԱՎԱԳԵՅԱՆ

О СТАТУЭТКАХ ИЗ ЛЧАШЕНА

За последние годы в Армении обнаружено большое количество каменных, глиняных и металлических статуэток людей и различных животных, датируемых с эпохи энеолита до античного времени. К числу их относятся: каменная статуя медведя в энеолитическом поселении Техут, глиняные фигурки людей, быков и других животных, модели повозок в раннебронзовом поселении Арич, статуэтки быков и людей того же времени в Шенгавите, Мохраблуре и Арарате, многочисленные позднебронзовые каменные идолы и бронзовые фигурки животных из Яйджи, Мецамора, Навура, Лчашена, Артика, Толорса и других мест. К этому кругу изделий относятся также замечательные бронзовые статуэтки людей и животных из Паравакара, Айрума, Норашена, Астхи-блура и т. д.

Эти находки вызывают большой интерес, поскольку они являются не только прекрасными произведениями, но и ценными источниками для изучения верований древних жителей Армянского нагорья.

Ниже мы остановимся на группе статуэток из позднебронзовых курганов Лчашена, датируемых XIV—XIII вв. до н. э. Эти курганы в 1956—1973 гг. изучались археологической экспедицией Института археологии и этнографии Академии наук Армянской ССР.

Рассматриваемые изделия состоят из прекрасно сохранившихся моделей колесниц, фигур оленей, быков, коз, птиц и т. д. Несмотря на совершенно различные фигуры и образы скульптур, у них много общих черт. Основное, что объединяет скульптурные изваяния и металлопластику Лчашена,— это реальность образов, стремление мастеров-литейщиков найти самое характерное в изображаемом образе: мощь и силу быка, легкость и грациозность оленя, стройную шею и заостренный клюв у птиц, бородку у коз и т. д. Таким образом, стремление найти главное, основное становится практикой, характерной не только для древних мастеров из Лчашена, но и Артика, Паравакара и других мест, причем нужно учесть, что все эти предметы отлиты только один раз по восковой модели, которая после отливки ломалась для извлечения статуэток.

Скульптура Лчашена, стилистически сближаясь с аналогичными изделиями из других памятников Армянского нагорья и сопредельных стран, является особым, очень богатым комплексом, имеющим наряду с общими и свои характерные черты. Они отличаются своим реализмом, изготовлены из грубого металлического шлака, и лишь небольшое количество статуэток изготовлено из чистой бронзы, а отдельные экземпляры обтянуты тонкой золотой пластиной. Эти изделия украшали дышло или части повозок из Лчашена точно так же, как это имело место в Уре и других культурных центрах Древнего Востока[1].

Лчашенские находки, являющиеся образцами древней металлопластики, без сомнения, использовались и при жизни их владельцев—племенной знати Лчашена, украшая их покои и молельни, боевые колесницы и повозки. Эти изделия по своему типу и назначению делятся на следующие группы.

Изображения коз представлены небольшой группой из четырех фигур. Аналогичные фигуры имеются также на якореобразной подставке одной из скульптур быков. Животные изображены стоящими как бы на вершине скал, приподняв голову на вытянутой шее, выпрямив передние и чуть согнув задние ноги, готовые в любой момент совершить прыжок. У них приподнятый круп, вогнутая спина и небольшая голова,

1 См. Н. Ф. Флитнер. Культура и искусство Двуречья. Л.—М., 1958, стр. 123.